ԲՆԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԱԾԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ

Հանրապետության տարածքին բնորոշ են մթնոլորտային գրեթե բոլոր երևույթները, որոնք անմիջական ազդեցություն ունեն բնակչության տնտեսական գործունեության վրա և կարող են առաջացնել տարբեր մասշտաբների տարերային աղետներ (նկար 1)։



Նկար 1. ՀՀ մարզերի խոցելիությունը հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների նկատմամբ։

Այսպես օրինակ՝ տեղումներից առաջացած հեղեղումները ակտիվացնում են վտանգավոր էկզոգեն պրոցեսները՝ սողանքներ, քարաթափումներ, ժայռերի էրոզիա, սելավներ, որոնք մեծ վտանգ են ներկայացնում բնակավայրերի, ճանապարհների, կամուրջների, ջրամբարների և բազմաթիվ այլ

ենթակառուցվածքների կենսունակության և նույնիսկ՝ ֆիզիկական գոյության համար: Միևնույն ժամանակ, էկոլոգիական անվտանգության հրատապ խնդիր է հանրապետության ողջ տարածքի խոցելիության և պոտենցիալ վտանգավոր սոցիալական, կենցաղային և տնտեսական օբյեկտների քանակի նվազեցման ծրագրերի մշակումը, դրա իրականացման օրենսդրական դաշտի և մեխանիզմների բարելավումը (առաջին հերթին սոցիալական և գույքի ապահովագրությունը), ինչը կնպաստի. տնտեսության, քաղաքաշինության և բնապահպանական համակարգերի հետագա զարգացումը, ինչպես նաև բնական և տեխնածին հետևանքների նվազեցմանը:

Էկոլոգիական անվտանգության այս հիմնահարցի առաջնայնությունը դրսևորվեց 2024թ. մայիսի 24–26-ին. Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում դիտվեցին ինտենսիվ տեղումներ, որոնց առավելագույն քանակը գրանցվվեց Լոռու և Տավուշի մարզերում: Դեբեդ և Աղստև գետերում ջրի մակարդակը կտրուկ բարձրացավ ավելի քան 2 մետրով, ինչի հետևանքով հեղեղվեցին գետերի հարակից բնակավայրերը, տնտեսական ենթակառուցվածքները, դադարեց գործել երկաթուղին, առանձնակի տուժեց Ալավերդի քաղաքի գետափնյա թաղամասերի բնակչությունը:

Հիդրոօդերևութաբանական առավել վտանգավոր երևույթներից է կարկտահարությունը: Այս երևույթը դիտվում է Հայաստանի Հանրապետության ինտենսիվ գյուղատնտեսության գրեթե բոլոր շրջաններում: